**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան 11.02.2022թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
# թիվ ԳԲՔԱ-LO-2022/03

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
Բողոք բերող՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ
Երրորդ անձ՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ն. Խաչատրյանի,
«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Աղախանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, ավտոմեքենաների ապահովագրման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 13.01.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի «Ավտոմեքենաների ապահովագրման» ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.01.2022թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 02 արձանագրության 4-րդ կետով «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի վերաբերյալ կայացված որոշումը:

2. Պարտավորեցնել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի «Ավտոմեքենաների ապահովագրման» ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովին «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

3. Պարտավորեցնել «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ին յուրաքանչյուր ավտոմեքենայի մասով ներկայացնել իր առաջարկված գնի հաշվարկ-բացվածքը, ինչպես նաև այլ տեղեկատվություն, որով պայմանավորված է եղել ներկայացված նվազագույն գևի/արժեքի չափը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.01.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 12.01.2022թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/464-2022 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 13.01.2022թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

14.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/03 համարի ծածկագիրը:

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, 25.01.2022թ.-ին ներկայացրած միջնորդությամբ, ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

25.01.2022թ.-ին և 11.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2022թ.-ին:

**2. <u>«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն 13.01.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի «Ավտոմեքենաների ապահովագրման» ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ (այսուհետ նաև ընթացակարգ):*

*Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն, «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն (այսուհետ նաև մասնակից կամ մասնակիցներ):*

*Համաձայն ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի գնահատման 04 հունվարի 2022թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 02 արձանագրության 3 կետում նշված աղյուսակի «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն ներկայացրել է նվազագույն գին, այն է 2 241 000 ՀՀ դրամ, իսկ մյուս մասնակիցները միևնույն 2 252 000 ՀՀ դրամ գինը, իսկ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ներկայացված նախահաշվային գինը կազմել է 2 500 000 ՀՀ դրամ:*

*Վերոհիշյալ արձանագրության 4-րդ կետի համաձայն հայտի /գնային առաջարկի/ գնահատման արդյունքում «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն հայտարարվեց ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի ընտրված մասնակից և որոշվեց վերջինիս «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ:*

*Նույն արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետով սահմանվել է անգործության ժամկետ պայմանագիրը կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որը այս դեպքում լրանում է 11.01.2022թ.-ին ժամը 10:30-ին:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն Հայաստանի Հանրապետությունում կարող է իրականացվել կամավոր և պարտադիր ապահովագրություն: Կամավոր ապահովագրությունն ապահովադրի կամավոր ցանկությամբ ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացվող ապահովագրությունն է: Պարտադիր ապահովագրությունը ապահովադրի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմաններն ու*

*իրականացման կարգը կարգավորվում են սույն օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և պարտադիր ապահովագրության մասին համապատասխան օրենքներով:*

*Ընկերության կողմից ներկայացված սույն բողոքի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից առաջարկված նվազագույն գինը հարցմանը կից ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմին ամրացված թվով 42 ավտոտրանսպորտային միջոցների համար «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) և ԱՊՊԱ ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի ներքո ԱՊՊԱ պայմանագրերի համար վճարման ենթակա ապահովագրավճարն է և քանի որ ԱՊՊԱ ոլորտում գործող բոլոր ապահովագրական ընկերությունների համար սահմանված են ապահովագրավճարի միևնույն պայմանները, ուստի անհասկանալի է ԱՊՊԱ պայմանագրերի համար հարցման մասնակիցների կողմից ներկայացված տարբեր գները, այդ թվում նվազագույն գինը:*

*Բոլոր մասնակիցները հանդիսանում են ապահովագրական ընկերություններ, որոնք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն իրավունք ունեն իրականացնել ապահովագրական գործունեություն, այդ թվում ԱՊՊԱ ոլորտում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՊՊԱ-ն հանդիսանում է պարտադիր ապահովագրության տեսակ, բացի վերոհիշյալ օրենքներից այս պարտադիր ապահովագրությունը առավել մանրամասնորեն կարգավորում է Օրենքով, ՀՀ Կենտրոնական բանկի իրավական ակտերով (այսուհետ ՀՀ ԿԲ), «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո» ՀԿ (այսուհետ Բյուրո) կանոններով (Բյուրոյի կանոնները հասանելի են www.paap.am կայքէջում «Իրավական ակտեր բաժնում») և ԱՊՊԱ ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, որոնցով ԱՊՊԱ ոլորտում գործող բոլոր ապահովագրական ընկերությունների համար սահմանված են միանման պայմաններ և կանոններ, այդ թվում ապահովագրավճարի կիրառման մասով և ԱՊՊԱ ոլորտում գործող որևէ ապահովագրական ընկերության կողմից, այս դեպքում «Արմենիա Ինշուրանս» ԱՓԲԸ կողմից, միևնույն ժամանակահատվածում միևնույն պայմաններով կնքվող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարի չափը (գինը) չի կարող տարբերվել տվյալ շուկայում գործող այլ ապահովագրական ընկերությունների կողմից տրված ապահովագրավճարի /գնի/ չափից:*

*Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն ԱՊՊԱ պայմանագիրը ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեցող ապահովագրական ընկերության և ապահովադրի միջև Օրենքի համաձայն կնքված ԱՊՊԱ պայմանագիրն է:*

*Օրենքի նույն հոդվածով ապահովագրավճարը ԱՊՊԱ պայմանագրով սահմանված չափով և պայմաններով ապահովադրի կողմից ապահովագրական ընկերությանն ԱՊՊԱ իրականացնելու ողջ ժամանակահատվածի համար վճարման ենթակա գումարն է, իսկ բազային ապահովագրավճարը և հիմնական ապահովագրավճարը Օրենքի հավելվածի համաձայն՝ Բյուրոյի կողմից հաշվարկվող հաշվարկային մեծություններն են:*

*Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարները պետք է լինեն հիմնավորված, ոչ խտրական և իրենց հաշվարկման հիմքում ներառեն ապահովագրական ընկերության կողմից ԱՊՊԱ պայմանագրում նշված ապահովագրական գումարի ապահովման համար անհրաժեշտ իրատեսական ծախսերի և ողջամիտ շահույթի հաշվարկը, ինչպես նաև Բոնուս-Մալուս գործակիցները: Սույն մասով սահմանված՝ խտրականության արգելքին վերաբերող դրույթը չի կարող սահմանափակել ապահովագրական ընկերության իրավունքը սահմանելու համար տարբերակված ապահովագրավճարներ՝ հիմնվելով ապահովադիրների, ապահովագրված անձանց և (կամ) ապահովագրվող ավտոտրանսպորտային միջոցների ռիսկայնության վրա: Կենտրոնական բանկը և Բյուրոն պարբերաբար իրականացնում են ապահովագրական ընկերությունների հաշվարկած ապահովագրավճարների՝ սույն մասով նախատեսված պահանջներին համապատասխանության ստուգումներ:*

*Օրենքի հավելվածում սահմանված բանաձևի հիման վրա հաշվարկվում և Բյուրոյի խորհրդի կողմից առնվազն տարին մեկ սահմանվում են հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն սահմանաչափերը, ինչպես նաև ռիսկայնության գործակիցների թույլատրելի արժեքները և Բոնուս-Մալուս գործակիցների մեծությունները:*

*Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով ապահովագրական շուկայում տեղի են ունեցել էական փոփոխություններ, կամ վտանգված են ԱՊՊԱ համակարգի կայունությունը և շարունակականությունը, որի հիման վրա անհրաժեշտ է սահմանել հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն նոր սահմանաչափեր, ռիսկայնության գործակիցների թույլատրելի նոր արժեքներ և (կամ) Բոնուս-Մալուս գործակիցների նոր մեծություններ, և դրանք ողջամիտ ժամկետում չեն սահմանվում (գրանցվում) սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, ապա Կենտրոնական բանկն իրավունք ունի ինքնուրույն հաշվարկելու և իր խորհրդի որոշմամբ սահմանելու հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն նոր սահմանաչափեր,*

*ռիսկայնության գործակիցների թույլատրելի նոր արժեքներ և (կամ) Բոնուս-Մալուս գործակիցների նոր մեծություններ: Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը ենթակա է Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից պարտադիր կիրառման, և դրա ուժի մեջ մտնելու օրվանից դադարեցվում է մինչև այդ սահմանված (գրանցված) համապատասխան սահմանաչափերի գործողությունը:*

*Բյուրոյի խորհուրդը Կենտրոնական բանկի առաջարկությամբ կամ սեփական նախաձեռնությամբ կարող է սահմանել հիմնական և բազային ապահովագրավճարների նվազագույն սահմանաչափեր, եթե նման սահմանաչափերի սահմանումն անհրաժեշտ է ԱՊՊԱ համակարգի կայունությունը և շարունակականությունն ապահովելու, ապահովագրական ընկերությունների միջև անբարեխիղճ մրցակցությունը բացառելու և (կամ) ապահովագրական շուկայում չհիմնավորված գնագոյացումը կանխելու նպատակով:*

*Բյուրոյի խորհուրդը, ելնելով ավտոտրանսպորտային միջոցների և դրանց սեփականատերերի և (կամ) օրինական հիմքով տիրապետող այլ անձանց վերաբերյալ տվյալներից և նրանց գործողությունների (անգործության) հետևանքով տեղի ունեցած ապահովագրական պատահարների և (կամ) թույլ տրված խախտումների քանակից և բնույթից (վարորդական պատմություն), սահմանում է ապահովագրավճարների զեղչերի և հավելավճարների համակարգ (Բոնուս-Մալուս համակարգ) և դրա կիրառման կարգը:*

*Ապահովադիրն ապահովագրավճարը վճարում է ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված չափով, կարգով և ժամկետներում: Արգելվում է ԱՊՊԱ պայմանագրի կնքման կամ դրա գործողության ընթացքում ապահովագրական ընկերության կողմից ԱՊՊԱ իրականացնելու համար ապահովադրից, ուղղակի կամ անուղղակի կերպով ապահովագրավճարից բացի, այլ գումարներ գանձելը, բացառությամբ ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար տուժանքի (տուգանքի, տույժի):*

*ԱՊՊԱ իրականացնող յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն պարտավոր է իր ինտերնետային կայքում ունենալ ապահովագրավճարի հաշվիչ, որին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Տվյալ ապահովագրական ընկերության ինտերնետային կայքում տեղադրված ապահովագրական հաշվիչի միջոցով հաշվարկված ապահովագրավճարի մեծությունը չի կարող տարբերվել նույն պայմաններով ապահովադրի համար տվյալ ապահովագրական ընկերության կողմից ԱՊՊԱ կանոնների (պայմանների) հիման վրա հաշվարկվող ապահովագրավճարի մեծությունից:*

*ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրավճարին վերաբերող դրույթները կիրառվում են ԱՊՊԱ պայմանագրում նշված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ առանձին:*

*Օրենքի հավելվածի համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով ապահովագրա-վճարների հաշվարկման մեթոդաբանության» (այսուհետ՝ մեթոդաբանություն) հիման վրա Բյուրոն հաշվարկում է ԱՊՊԱ գծով հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն սահմանաչափերը և դրանք ներկայացնում է Կենտրոնական բանկ՝ գրանցման: Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացվում նաև հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն սահմանաչափերի ցանկացած փոփոխություն, ինչպես նաև ապահովագրավճարների հաշվարկման մեջ սույն մեթոդաբանության 3.4-րդ կետով նախատեսված այլ ռիսկայնության գործոնների ընդգրկումը՝ բավարար հիմնավորումների առկայության դեպքում: Հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն սահմանաչափերը և մեթոդաբանության համաձայն հաշվարկված այլ մեծությունները Բյուրոյի, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից վերանայվում են ոչ պակաս, քան յուրաքանչյուր տարին մեկ, որի հետևանքով նախաձեռնվում է դրանց փոփոխություն, կամ դրանք թողնվում են անփոփոխ: ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանությունը ներառյալ հիմնական և բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը, ռիսկայնության գործակիցների թույլատրելի արժեքները, Բոնուս-Մալուս համակարգի կիրառման կարգը, Բոնուս Մալուս գործակիցների մեծությունները և Ապահովագրողների կողմից ապահովագրավճարի սահմանման և դրա կիրառման գործընթացի նկատմամբ նվազագույն պահանջները սահմանված են նաև Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի RL1-001 կանոնների Հավելված 3-ով: Ի թիվս այլ կարգավորուների նշված հավելվածի 12-րդ կետով նախատեսված է, որ ապահովագրողներն անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով իրավունք չունեն ԱՊՊԱ պայմանագրի համար Կանոնների համաձայն հաշվարկված ապահովագրավճարների նկատմամբ կիրառել որևէ ուղղակի կամ անուղղակի զեղչեր ներառյալ տրամադրել ԱՊՊԱ պայմանագրի կնքմանը ուղեկցող ցանկացած անհատույց կամ զեղչված գնով ծառայություններ կամ նվերներ: Նույն հավելվածի 11- րդ կետով նախատեսված է, որ ապահովագրողները բոլոր ԱՊՊԱ պայմանագրերի գծով պետք է կիրառեն միևնույն հիմնական ապահովագրավճարը, բացառությամբ ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի, որոնց համար պետք է կիրառվի հիմնական ապահովագրավճարի*

*չափից 5 տոկոս ցածր չափ, անկախ նրանից թե նման նվազեցման արդյունքում հիմնական եւ/կամ բազային ապահովագրավճարը պակաս կլինի Կանոններով նախատեսված նվազագույն սահմանաչափից: Այս կանոնը գործում է միայն այն ապահովադիրների հանդեպ, որոնք ունեն ԲՄ ցածր ռիսկային խումբ:*

*Հարկ ենք համարում նշել նաև, որ վերջին երեք ամսվա դրությամբ Բյուրոյի կողմից սահմանվել է հիմնական ապահովագրավճար, որը կազմում է 33,122 ՀՀ դրամ և որը գործում է այս պահին և ԱՊՊԱ ոլորտում գործող բոլոր ապահովագրական ընկերությունները պետք է առաջնորդվեն և կիրառեն այդ հիմնական ապահովագրավճարի չափը: Նշված փաստը կարող է հիմնավորվել նաեւ Բյուրոյի կողմից, ինչի վերաբերյալ Ընկերությունը արդեն իսկ հարցում է ուղարկել Բյուրոյին, որի պատասխանը Ընկերությունը լրացուցիչ կներկայացնի բողոքի լսումների ընթացքում:*

*Հաշվի առնելով և վերլուծելով վերոգրյալը, հարկ ենք համարում նշել, որ հիմնական ապահովագրավճարի չափը կարող է փոփոխվել միայն ռիսկայնության գործակիցների և բոնուս մալուսի դասի փոփոխությունների դեպքում, սակայն այդ փոփոխությունները եւս միևնույն ռիսկայնության գործակիցներով միևնույն բոնուս մալուսի դասով միևնույն ավտոմեքենաների դեպքում պետք է լինեն միևնույնը բոլոր ապահովագրական ընկերությունների համար և չեն կարող տարբերվել, բացառությամբ վերոհիշյալ առցանց եղանակով կնքման դեպքերի:*

*Նշված իրավական դրույթների վերլուծությունից առնվազն անհասկանալի է տարբեր ապահովագրական ընկերությունների կողմից ԱՊՊԱ պայմանագրերով ապահովագրվող միևնույն ժամանակահատվածում միևնույն ավտոմեքենաների ռիսկայնության գործակիցներով, միևնույն բոնուս մալուսի դասով առաջարկվող տարբեր ապահովագրավճարները: Միակ փոփոխվող գործակիցը, որը տարբեր ապահովադիրների համար կարող է տարբեր լինել, տվյալ ապահովադրի հանդեպ կիրառվող բոնուս-մալուս գործակիցն է:*

*Նաև անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, որ հարցման հրավերով չի պահանջվել մասնակիցներից ներկայացնել գնի բաղադրիչների հաշվարկ կամ ԱՊՊԱ պայմանագրերի նախագծեր, որոնք հնարավորություն կտային պարզելու, թե ինչպես են հաշվարկել մասնակիցները գինը և թե ինչպես է «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն ներկայացրել ամենացածր գինը:*

*Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հստակ է, որ հարցման շրջանակում մասնակիցների կողմից ներկայացված գները չեն կարող տարբերվել, քանի որ դրանք ներկայացվում են միևնույն ժամանակահատվածում միևնույն ռիսկայնությամբ և բոնուս*

*մալուսի դասով միևնույն մեքենաների համար, իսկ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն չէր կարող ներկայացնել նվազագույն գին վերոհիշյալ պատճառաբանությամբ, իսկ վերջինս ներկայացրել է ԱՊՊԱ ոլորտը կարգավորող օրենսդրությանը չհամապատասխանող գին և դուրս է եկել ԱՊՊԱ ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներից, այնինչ բոլոր մասնակիցները, ինչպես նաև նվազագույն գին ներկայացրած «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն պետք է ներկայացնեին այն նույն գինը, ինչ-որ ներկայացրել է Ընկերությունը և մյուս մասնակիցները, քանի որ հենց Ընկերության և մյուս մասնակիցների կողմից ներկայացված ապահովագրավճարը/գինն է հաշվարկված և համապատասխանում ԱՊՊԱ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված հաշվարկի պահանջներին, ուստի գտնում ենք, որ ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով գնման գործընթացի գնահատման 04 հունվարի 2022թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 02 արձանագրության 4-ով կայացված որոշումը «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ- ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ, իրավաչափ չէ, հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 1-ին կետի, ԱՊՊԱ ոլորտը կարգավորող վերոհիշյալ օրենսդրության պահանջներին և որպես հետևանք Ընկերությանը զրկում է ընտրված մասնակից ճանաչվելու հնարավորությունից:*

*Հետևաբար մրցույթի ընտրված մասնակից ճանաչված «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հետ չի կարող կնքվել ընթացակարգին կից պայմանագիրը, եթե վերջինս խախտել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները, ուստի նրա կողմից ներկայացված հայտը պետք է գնահատվի անբավարար և մերժվի:»:*

Ելնելով վերոգրյալից՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի «Ավտոմեքենաների ապահովագրման» ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.01.2022թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 02 արձանագրության 4-րդ կետով «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի վերաբերյալ կայացված որոշումը:

2. Պարտավորեցնել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի «Ավտոմեքենաների ապահովագրման» ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովին «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

3. Պարտավորեցնել «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ին յուրաքանչյուր ավտոմեքենայի մասով ներկայացնել իր առաջարկված գնի հաշվարկ-բացվածքը, ինչպես նաև այլ տեղեկատվություն, որով պայմանավորված է եղել ներկայացված նվազագույն գևի/արժեքի չափը:

**3. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 14.01.2022թ.-ին թիվ ԲՔԱ-ԼՕ/1/659-2022 գրությամբ դիմել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 13.01.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 25.01.2022թ.-ի թիվ 1/331-2022 գրությամբ ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը և հայտնել գրավոր դիրքորոշում հետևյալի մասին.

*«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը «Ավտոմեքենաների ապահովագրման» ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպել է ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հրավերը մասնակիցներին («ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն, «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ն, «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն) ուղարկվել է 29.01.2022 թվականին:*

*Ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակիցները ներկայացրել են գնային առաջարկներ: Փաստաթղթերը ուսումնասիրելու արդյունքում պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն արձանագրեց, որ բոլոր մասնակիցները ներկայացրել են ՀՀ Ազգային ժողովի հաշվեկշռում հաշվառված թվով 42 տրանսպորտային միջոցների ապահովագրության ծառայությունների ձեռքբերման համար 2252000 ՀՀ դրամ, բացառությամբ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ից, որը ներկայացրել է 2241000 ՀՀ դրամ: Անգործության ավարտին հաջորդող օրը 11.01.2022թ. մասնակիցը ծանուցվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ, 13.01.2022թ. մասնակիցը ներկայացրել է կնքված*

*պայմանագիրը, որը նույն օրը հաստատվել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից և մուտքագրվել համակարգ:*

*ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 30-րդ կետի (...) եթե գնահատող հանձնաժողով չի ձևավորվում, ապա գնահատող հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը, մասնագիտական խումբ ձևավորված լինելու դեպքում՝ խումբը, իսկ հանձնաժողովի քարտուղարինը՝ գնումները համակարգողը:*

*71-րդ կետի 3-րդ ենթակետի բ) մասի համաձայն՝ (բ. ներկայացնում է միայն գնային առաջարկ:):*

*40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ (...) Հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:*

*Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 04.01.2022թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 Արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հայտի /գնային առաջարկի/ գնահատման արդյունքում «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ն հայտարարվեց «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի ընտրված մասնակից (այսուհետ՝ Ընտրված մասնակից): Իսկ 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվել (հրապարակվել) 05.01.2022 թվականից մինչև 10.01.2022 թվականը ներառյալ: Հայտնում ենք, որ այդ ժամանակահատվածում ունեցել ենք մասնակից, որը հարցումներ է ներկայացրել՝ տրամադրել «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի փաստաթղթերը և որից հետո փաստաթղթեր պահանջող մասնակիցը նորից գրություն է ուղարկել հիմնավորելով, մեջբերում ենք՝*

*(Հարգելի գործընկերներ,*

*Ցանկանում եմ տեղեկացնել, որ Արմենիա Ինշուրանս ԱՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկում TOYOTA HIACE 2.7 մակնիշի, 049HH01 հաշվառման համարանիշի Տրանսպորտային միջոցի ապահովագրավճարը չի համապատասխանում տվյալ Տրանսպորտային միջոցի ապահովագրության համար ՀՀ օրենդրությամբ սահմանված ապահովագրավճարի մեծությանը: Հարց է առաջանում՝ ինչպես կարող է նույն մակնիշի, նույն ծիաուժի, նույն նստատեղերի քանակն ունեցող մեկ այլ՝ TOYOTA HIACE 2.7 մակնիշի, 048HH01 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի տարեկան ապահովագրավճարը լինել 55,000 ՀՀ դրամ, իսկ 049HH01 հաշվառման համարանիշով*

*ՏՄ-ինը՝ 44,000 ՀՀ դրամ:), ինչով պայմանավորված նույն բովանդակությամբ ծանուցվել է Ընտրված մասնակիցը՝ պարզաբանում ստանալու: 10.01.2022 թվականին ի պատասխան հարցմանը ներկայացրել է հիմնավորումները, որը մեջբերում ենք՝*

*(Հարգելի Գործընկեր,*

*Սույն նամակով ցանկանում ենք Ձեզ տեղյակ պահել, որ "Արմենիա Ինշուրանս" Ապահովագրական ընկերությունը իրականացրել է մեքենաների ապահովագրության գնային հաշվարկ՝ ելնելով ԱՊՊԱ պայմանագրերի համար ASWA համակարգի միջոցով առաջարկվող արժեքներից (և քանի որ նշված մեքենան նոր էր ձեռք բերվել և իր համար մինչ այդ պայմանագրեր չէին կնքվել, մենք կարողացանք տրամադրել ավելի մատչելի գնառաջարկ) և վստահեցնում ենք, որ ԱԺ-ի թվով 42 մեքենաների օգտագործումից բխող պատասխանատվությունը պատշաճ կարգով ապահովագրված է և հետագա խնդիրներ չի կարող առաջանալ:):*

*Վերոգրյալով պայմանավորված՝ հայտնում ենք, որ բողոքաբերը կարող էր անգործության ժամանակահատվածում հարցում ուղարկել և ստանալ պարզաբանում: Իսկ ինչ վերաբերում է ընտրված մասնակցին, ապա հայտնում ենք, որ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել գնումների օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:»:*

**4. <u>Երրորդ անձ՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, 25.01.2022թ.-ին ներկայացված բանավոր միջնորդությամբ, ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին և բանավոր կերպով հայտնել իր դիրքորոշումը ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքների վերաբերյալ:

**5. <u>ԳԲՔԱ-LO-2022/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ավտոմեքենաների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն և «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.01.2022թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից առաջարկել է հետևյալ գները.

| Մասնակիցներ | Անվանումը | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդամենը | Նախահաշվային առավելագույն գին |
|---|---|---|---|---|---|
| «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն | Ավտոմեքենաների ապահովագրման ծառայություններ | 2252000 | - | 2252000 | 2500000 |
| «ԱՐՄԵՆԻՍ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ն | | 2241000 | - | 2241000 | |
| «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻՍ» ՓԲԸ | | 2252000 | - | 2252000 | |
| «Ռոսգոստրախ- Արմենիա» ԱՓԲԸ | | 2252000 | - | 2252000 | |
| «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ | | 2252000 | - | 2252000 | |

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հայտի /գնային առաջարկի/ գնահատման արդյունքում, որոշել է «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ին հայտարարել «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի ընտրված մասնակից և վերջինիս գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ:

## 6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Ռոսգոսստրախ-

Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 13.01.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում

իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

23) գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը չի տարածվում գործարքների հետևյալ տեսակների վրա.

1) աշխատանքային պայմանագրեր.

2) օրենքով նախատեսված դեպքերում քրեական, վարչական կամ դատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումներով նախատեսված կոնկրետ անձանց կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերում.

3) արժեթղթերի հավատարմագրային կառավարման հետ կապված գործարքներ.

4) պետություն-մասնավոր գործընկերության, ներառյալ կոնցեսիայի այն գործարքները, որոնք կարգավորվում են «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով…:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում…:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 28.06.2010թ.-ին թիվ 1/669-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 19.08.2010թ.-ին թիվ 216-Ա որոշմամբ փոփոխված Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կանոնադրության (այսուհետ նաև՝ Կանոնադրություն) 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ սույն կանոնադրությունը մշակվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող

պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ստորև՝ Օրենք), ինչպես նաև իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան: «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպությունը (ստորև՝ Բյուրո) Օրենքի համաձայն հիմնադրված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ստորև՝ ԱՊՊԱ) իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոն է, որի գործունեության նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովումը, այդ թվում՝ ԱՊՊԱ-ի ոլորտում իր անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետությանը նպաստելու, այն կարգավորելու և վերահսկելու, ԱՊՊԱ-ի ոլորտում իր անդամ ապահովագրական ընկերությունների համար մասնագիտական վարքագծի կանոններ մշակելու միջոցով: (փոփ. է Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի 22/11/2017թ թիվ 4-Լ):

Կանոնադրության 3-րդ կետի համաձայն՝ Բյուրոն հիմնադրվել է «իրավաբանական անձանց միություն» կազմակերպական-իրավական ձևով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն անվանումով՝ համաձայն Օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի՝ որպես հիմնադրի նախագահի որոշմամբ: Հետագայում Օրենքում կատարված համապատասխան փոփոխության արդյունքում Բյուրոն վերակազմավորվել է հասարակական կազմակերպության: (փոփ. է Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի 22/11/2017թ թիվ 4-Լ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ավտոմեքենաների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.01.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ Հանձնաժողովը, հայտի /գնային առաջարկի/ գնահատման արդյունքում, որոշել է «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ին հայտարարել «ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի ընտրված մասնակից և վերջինիս գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ հասարակական կազմակերպություն հանդիսացող, ըստ այդմ՝ այդպիսի կազմակերպաիրավական կարգավիճակ ունեցող Բյուրոյի կողմից ընդունված

որևէ կանոն, իրավական առումով, չի կարող գնումների օրենսդրության հետ իրավական հակասությունների (իրավական կոլիզիաների) իրավիճակ առաջանալու դեպքում ունենալ հավասար կամ առավել ևս ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող դրույթ:

Անդրադառնալով «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ին յուրաքանչյուր ավտոմեքենայի մասով առաջարկած գների արժեքի հաշվարկը (բացվածքը) և այլ մանրամասն տեղեկատվություն ներկայացնելուն պարտավորեցնելու մասին բողոքով ներկայացված պահանջին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ այդ պահանջը նույնպես անհիմն է, քանի որ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում…:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից 13.01.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/03 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**